

ՏՕՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ
2006



Բովանդակութիւն.

- Համբարձման Աստուածաշնչեան Ընթերցումներ.
- Կապակցում Ընթերցումների միջեւ.
- Վարդապետական Պատգամ.
- Հովուական մտորումներ:

ՀԱՄԲԱՐՉՄԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԵԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գործք Առաքելոց 1, 1-11

Իմ առաջին գրքում, ո՛վ Թէոֆիլոս, գրեցի այն ամէնի մասին, ինչ Յիսուս կատարեց եւ ուսուցանեց սկզբից մինչեւ այն օրը, երբ իր պատուէրներն իր ընտրած առաքեալներին տալուց յետոյ՝ Սուրբ Հոգու գորութեամբ երկինք համբարձաւ: Իր չարչարանքներին յաջորդող քառասուն օրերի ընթացքում նա բազմիցս երեւաց նրանց, տարբեր կերպերով ցոյց տալով՝ որ ինքն այլեւս ողջ է, եւ խօսեց Աստուծոյ Արքայութեան մասին: Եւ մի առիթով, երբ նրանց հետ հաց էր ուտում, պատուիրեց նրանց՝ ասելով.

«Երուսաղէմից մի՛ հեռացէք, սպասեցէք, մինչեւ որ ստանաք Հօր խոստումը, որի մասին ասացի ձեզ: Յովհաննէսը ջրով մկրտեց, բայց դուք մօտ օրերս մկրտուելու էք Սուրբ Հոգով»:

Մի ուրիշ անգամ, երբ դարձեալ հաւաքուել էին, առաքեալները հարցրին նրան. «Տէր, արդեօք հիմա՞ է ժամանակը, երբ վերականգնուելու ես Իսրայէլի թագաւորութիւնը»:

Յիսուս պատասխանեց. «Դուք չէք կարող իմանալ ժամերն ու ժամանակները, որոնք Հայրը որոշել է իր իշխանութեամբ: Բայց երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրայ, գորութեամբ կը լցուէք եւ իմ վկաները կը լինէք Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում ու Մամարիայում եւ մինչեւ աշխարհի ծայրերը»:

Այս խօսքերից յետոյ, մինչ նրանք դեռ նայում էին նրան, Յիսուս երկինք համբարձաւ եւ մի ամպ նրան ծածկեց նրանց տեսողութիւնից: Եւ քանի որ առաքեալները շարունակում էին սեւեռուն հայեացքով նրա դէպի երկինք գնալը դիտել, ահա երկու սպիտակազգեստ մարդիկ երեւացին նրանց եւ ասացին.

«Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ էք կանգնել ու երկնքին էք նայում: Այս Յիսուսը, որ երկինք համբարձաւ, մի օր կրկին վերադառնալու է այնպէս՝ ինչպէս տեսաք նրա երկինք գնալը»:

Պողոս Առաքեալի Նամակը Եփեսացիներին 4, 1-13

Արդ ես, որ բանտում եմ գտնւում Տիրոջ համար, աղաչում եմ ձեզ, այնպէս ապրեցէք՝ ինչպէս վայել է ձեր կոչումին, որին հրաւիրեց ձեզ Աստուած: Միշտ խոնարհ եղէք, հեզ ու համբերատար, եւ ցոյց տուէք ձեր սէրը՝ միմեանց հանդուրժելով: Զանացէք պահել Սուրբ Հոգու շնորհած միութիւնը խաղաղութեան կապով:

Մէկ է մարմինը եւ մէկ՝ Սուրբ Հոգին,

ինչպէս մէկ է յոյսը, որի համար Աստուած կանչեց ձեզ:

Մէկ է Տէրը, մէկ՝ հաւատքը,

մէկ է նաեւ Մկրտութիւնը:

Մէկ է Աստուած, Հայրն ամէնքի,

որ տիրում է բոլորին,

որ գործում է բոլորի միջոցով

եւ մնում է բոլորի մէջ:

Բայց մեզնից իւրաքանչիւրին տրուած է մի շնորհ, Քրիստոսի պարգեւած չափով: Ահա թէ ինչու Սուրբ Գիրքն ասում է.

«Բարձրունքները բարձրացաւ

բազմաթիւ գերիներ իր հետ տանելով,

եւ պարգեւներ բաշխեց մարդկանց»:

Ի՞նչ է ուզում ասել՝ ասելով «բարձրացաւ»: Ուզում է ասել, որ նախ իջաւ երկրի ստորին կողմը: Նա՞ որ իջաւ, նոյն ինքն է՝ որ բարձրացաւ բոլոր երկինքներից վեր,

որպէսզի իրենով լցնի ամբողջ տիեզերքը: Եւ նա Քրիստոսն էր, որ «պարգեւներ բաշխեց մարդկանց», որպէսզի ոմանք լինեն առաքեալ, ոմանք՝ մարգարէ, ոմանք՝ աւետարանիչ, ոմանք՝ հովիւ եւ ուսուցանող, պատրաստելու համար Աստծոյ ժողովրդին եւ նրանց դնելու Աստծոյ ծառայութեան մէջ, որպէսզի Քրիստոսի մարմինը՝ Եկեղեցին, աճի ու զօրանայ, մինչեւ որ բոլորս հասնենք հաւատքի ամբողջական միութեանն ու Աստծոյ Որդու ճանաչմանը, այսինքն՝ մինչեւ որ հասնենք հաւատքի չափահասութեանը, Քրիստոսի կատարեալ նմանութեանը:

Մարկոսի Աւետարան 16, 15-20

Եւ [Յիսուս] ասաց նրանց.

«Գնացէք ամբողջ աշխարհով մէկ եւ բոլոր մարդկանց քարոզեցէք Աւետարանը: Ով որ հաւատայ եւ մկրտուի, կը փրկուի, իսկ ով որ չհաւատայ, կը դատապարտուի: Նրանք, ովքեր հաւատում են, յայտնի կը լինեն հետեւեալ նշաններով. իմ անունով չար ոգիներ կը հանեն, նոր լեզուներ կը խօսեն, իրենց ձեռքերում օձեր կը բռնեն առանց խայթուելու, եւ եթէ մահացու որեւէ թոյն էլ խմեն, չեն վնասուի, հիւանդների վրայ ձեռք կը դնեն եւ նրանց կը բժշկեն»:

Տէր Յիսուսն աշակերտների հետ խօսելուց յետոյ երկինք համբարձաւ եւ Հօր աջ կողմում բազմեց: Իսկ նրանք, աշխարհի բոլոր կողմերը գնալով, քարոզում էին Աւետարանը Տիրոջ գործակցութեամբ, եւ նրանց քարոզչութիւնը հաստատուում էր իրենց տրուած բոլոր նշաններով:

ԿԱՊԱԿՅՈՒՄ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՒ

Տիրոջ Համբարձումը մի նոր ու վերջնական հանգրուան է բացում Առաքեալների կեանքում: Յարութիւն առած Տէրն այլեւս տեսանելի չի լինելու, այլ բարձրանում է երկինք, Հօր առաջ մարդկանց համար միջնորդելու ու բարեխօսելու: Սա մեզ պատմում է Գործք Առաքելոց գիրքը, ընդգծելով Առաքեալների հիացումն ու որոշ չափով զարհուրած հոգեվիճակը: Աւետարանն, ի մասնաւորի, շեշտը դնում է Յիսուսի կողմից աշակերտներին յանձնուած առաքելութեան վրայ: Խօսքը վերաբերում է մի իրական առաքելական պաշտօնատուութեան. «Գնացէ՛ք եւ քարոզեցէ՛ք»: Եփեսացիներին ուղղած իր նամակում, Պօղոս Առաքեալն ընդգծում է այս կոչմանը համապատասխան վարմունք եւ ապրելակերպ ունենալու անհրաժեշտութիւնը, որովհետեւ իւրաքանչիւր քրիստոնեայի տրուել է շնորհը, Քրիստոսի պարգեւի չափով: Ուստի, Առաքեալները գտնուում են մի նոր իրավիճակի դիմաց: Մի կողմից, Քրիստոսի խօսքի համաձայն, պէտք է սպասեն Սուրբ Հոգու գալստեանը, բայց միւս կողմից էլ պէտք է ըմբռնեն, որ արդէն հասել է Քրիստոսի գործը շարունակելու պահը, Նրա Մարմնում՝ որ է Եկեղեցին:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Ա) Համբարձաւ երկինք:

Մարկոսի Աւետարանը յստակ կերպով հաստատում է. «Տէր Յիսուսն աշակերտների հետ խօսելուց յետոյ երկինք համբարձաւ եւ Հօր աջ կողմում բազմեց» (Մրկ 16, 19): Յարութեան պահից արդէն, Յիսուսի մարմինն անմիջապէս փառաւորուեց: Այսուամենայնիւ, յաջորդ քառասուն օրերի ընթացքում, որոնցում յայտնուեց Առաքեալներին, Նրա փառքը դեռեւս քօղարկուած մնաց մարդկային սովորական կերպարանքի ներքոյ, չնայած հրաշքներին՝ որ կատարում էր: Յիսուսի վերջին երեւումը

աւարտուում է Աստուածութեան փառքի մէջ Նրա մարդկային բնութեան անյետսկոչելի մոտաքով: Ահա այս դէպքը, իրադարձութիւնն է, որ մենք տօնակատարում ենք որպէս Տիրոջ Համբարձման տօն:

Յարուցեալ Յիսուսը տարբեր առիթներով երեւացել էր իր աշակերտներին եւ սա մեծ նշանակութիւն ունէր, որովհետեւ նրանց համար վերահաստատում էր մեղքի ու մահուան դէմ Քրիստոսի տարած յաղթանակը: Համոզուել էին, որ Աւետարանին հաւատալով չէին սխալուել, եւ որ այժմ իրենց յանձնուում էր մի առաքելութիւն, որ գրաւելու էր նրանց ապագայ ամբողջ կեանքը: Այս վերջին երեւման ժամանակ նկատուում են, որ Յիսուս իրենց ողջունում է վերջին անգամ, բայց միաժամանակ հասկանում են, որ մնում է իրենց կողքին, իր զօրակցութեամբ, մինչեւ ժամանակների վախճանը: Հասկանում են, որ Քրիստոս հասել է իր նպատակակէտին, եւ ապրում ու թագաւորում է Հայր Աստծոյ հետ: Երկինք համբարնալը եւ Հօր աջ կողմում բազմելը նշանակում է Օծեալի թագաւորութեան սկիզբը, կատարումը Դանիէլ Մարգարէի տեսիլքի, որ վերաբերում էր Մարգու Որդուն. «Նրան տուեց իշխանութիւն, փառք եւ թագաւորութիւն: Բոլոր ժողովուրդները, ազգերն ու լեզուները ծառայում էին Նրան: Նրա իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է, որ երբեք չի անցնում, եւ Նրա թագաւորութիւնն այնպիսին է, որ երբեք չի կործանուելու» (Դան 7, 14): Այս պահից սկսած, Առաքեալները դարձան վկաները «Արքայութեան, որ վախճան չի ունենալու»: Եւ հասկացան, որ Տէրը մեկնեց՝ իրենց եւ մեր համար յաւիտենական օթեւաններ պատրաստելու (Հմմտ. Յվհ 14, 2): Քրիստոսի համբարձման նպատակակէտը նաեւ իրենցն է եւ բոլոր նրանցը՝ ուրքեր հաւատալու են Նրան: Թէեւ նրանց կեանքն իրօք, ինչպէս որեւիցէ ա՛յլ մարդու կեանքը, մօտենում է մահուանը, այնուամենայնիւ նրանք զգում են՝ որ ամէն ինչ չի վերջանում մահուան գրկում, այլ՝ Աստծոյ հետ յաւիտենական հաղորդութեան մէջ: Մի կողմից, կարող էին տրտմել, Յիսուսից բաժանուելու պատճառով. միւս կողմից, սակայն, մեծապէս երջանիկ էին, որովհետեւ Տէրը կատարեալ ու վերջնական կերպով յաղթանակել էր, եւ յոյսը վստահեցնում էր նրանց՝ որ շուտով միանալու էին Նրան յաւիտենական կեանքում:

Բ) Աշակերտների առաքելութիւնը:

Յիսուս Քրիստոս իր աշակերտներին տալիս է Աւետարանը բոլոր մարդկանց քարոզելու պարտականութիւնը: Այդուհետեւ Նա գործելու է իր աշակերտների եւ նրանց յաջորդների միջոցով: Քրիստոսի աշակերտներին տրուած է Քրիստոսի գործը շարունակելու զարմանահրաշ առաքելութիւնը: Այս առաքելութիւնը տակաւին գործի մէջ է, եւ Եկեղեցին միշտ պարտականութիւնն ունի աւետարանելու եւ քարոզելու Յիսուս Քրիստոսի կողմից մեզ պարգեւուած փրկութեան աւետիսը: Այս Աւետարանի, այսինքն՝ աւետիսի, բարի լուրի, էութիւնն այն է՝ որ «Նազովրեցի Յիսուսը Քրիստոսն է, Աստծոյ Որդին» (Հմմտ. Հռմ 10, 9), եւ որ յանձինս Նրա ստանում ենք փրկութիւնը եւ Աստծոյ կատարեալ յայտնութիւնը: «Ով տեսնում է Քրիստոսին, տեսնում է Հօրը»: Աստուած յայտնուել է, երեւացել է մարդուն, մղուած՝ իր սիրուց:

Մարդիկ փրկութեան կարիք ունէին, եւ նրանց փրկելու համար Աստուած առաքեց իր Որդին: Յանձինս Քրիստոսի, կարող ենք հասնել Հօրը: Տիրոջ Համբարձման օրից սկսած, աշակերտները սկսեցին աւելի խորը կերպով խորհրդածել առաքելական այս պաշտօնի վրայ: Անշուշտ, Սուրբ Հոգու գալուստով է միայն, որ նրանք ստանալու էին վկաներ լինելու համար հարկաւոր ուժը, բայց իրենց կոչման առաջին օրուանից արդէն գիտակից էին՝ որ Յիսուս իրենց կանչել էր՝ որպէսզի «Իր հետ լինէին եւ նրանց քարոզելու առաքէր»: Համբարձման տօնն ընդգծում է առաքելական քարոզչութեան պարտաւորութիւնը:

Ա) Յոյսի առաքինութիւնը:

Տիրոջ Համբարձման տօնը սրտազին հրաւէր է բարձրացնելու մեր հայեացքը դէպի երկնային իրականութիւնները, գիտակից՝ որ ուր մտաւ Քրիստոս, մտնելու է նաեւ Քրիստոսի Եկեղեցին: Պօղոս Առաքեալի յորդորը միշտ արգիւական է. «Եթէ, ուրեմն, Քրիստոսի հետ յարութիւն էք առել, վերին իրականութիւնները փնտռեցէք, ուր գտնուում է Քրիստոս, Աստծոյ աջ կողմում բազմած: Վերին իրականութիւնների մասին խորհեցէք, ո՛չ թէ երկրայինների: Դուք, յիշաւի, մահացել էք եւ ձեր կեանքն այսուհետեւ ծածկուած է Քրիստոսի հետ Աստծոյ մէջ» (Կղս 3, 1-3): Քրիստոնեայի կեանքը միշտ ծածկուած է Քրիստոսի հետ Աստծոյ մէջ: Մի աշխարհում, ինչպիսին մերն է, ուր գործիքաշինական յեղաշրջումն ու զարգացումը վիթխարի չափերի են հասնում, եւ ուր խարդախումների ու այլալուծմաների հնարաւորութիւնը տարածուել է գրեթէ ամէնուր, գրեթէ առանց սահմանափակումների, մարդկային գոյութեան գրեթէ բոլոր ասպարէզներում, մարդիկ շօշափելի կերպով բռնուում են մի տեսակ վախի զգացումով: Վախ, որ վերջ ի վերջոյ ամբողջ այս զարգացումը կարող է ինչ որ կերպ գործածուել նոյն ինքն մարդկութեան դէմ: Մարդիկ միշտ աւելի են զգում այս վախը: Նրանք մտահոգ են, որ մարդու իսկ ձեռքով ստեղծուած արտադրանքները, բնականաբար ո՛չ բոլորը եւ ո՛չ էլ մեծամասնութիւնը, այլ ոմանք եւ յատկապէս այն քերթը՝ որոնք իրենց մէջ պարունակում են մարդկային հանճարի ու նախաձեռնութեան մեծ քանակ, կարող են արմատական կերպով գործածուել մարդկութեան դէմ:

Այս վախը յաղթահարելու համար, եւ, է՛լ աւելի, խուսափելու համար՝ որ մարդու արտադրանքները հական ու արմատական վնաս հասցնեն իրեն իսկ մարդուն, անհրաժեշտ է՝ որ գիտական ու գործիքաշինական յառաջիկայացմանը համընթաց տեղի ունենայ նաեւ մարդու բարոյական եւ բարոյագիտական զարգացում: Միմիայն յարգելով իր Արարչի օրէնքները, մարդը կարող է կատարել գործեր, որոնք արժանի են իր կոչմանն ու առաքելութեանը: Երբ մարդը հեռանում է աստուածային օրէնքից եւ ողջամիտ բանականութեան դատողութիւնից, ինքն իրեն նետում է վտանգաւոր լաբիրինթոսի մէջ, որտեղից անհնարին է ողջ ու առողջ դուրս գալ:

Կարող ենք ասել, որ Համբարձման տօնը մեզ հրաւիրում է մեր հայեացքը դէպի երկինք սեւեռելու, ուր Քրիստոս բազմած է Հօր աջ կողմում, բայց միաժամանակ՝ գործի անցնելու եւ հոգու գուարթութեամբ աշխատելու ա՛յս աշխարհի այգեստանում, որ շարունակում է կարիքն ունենալ Աստծոյ որդիների յայտնութեանը: Հրաւէր է՝ շարունակելու աշխատել՝ կերտելու համար «սիրոյ քաղաքակրթութիւնը», եւ «միշտ պատրաստ լինելու պատասխանել նրանց՝ ովքեր հարցնում են պատճառը յոյսի՝ որ մեզնում է» (Հմմտ. 1Պտ 3, 15): Քրիստոնեան պէտք է յոյսի եւ լոյսի մարդ լինի, մի աշխարհում՝ ուր տարածուում է ստուար խաւարը: Աւետարանչութիւնն, ուստի, իրենում պարունակում է նաեւ յոյսի քարոզչութիւնը, յոյս՝ Աստծոյ խոստումների հանդէպ, խոստումներ՝ որոնք Աստուած կատարել է յանձինս Յիսուս Քրիստոսի կնքուած Նոր Ուխտով: Պարունակում է նաեւ սիրոյ քարոզչութիւնը. Աստծոյ սէրը մեր նկատմամբ եւ մեր սէրը Աստծոյ նկատմամբ. քարոզչութիւնը եղբայրական սիրոյ, մէկս միւսի եւ ամբողջ մարդկութեան նկատմամբ, որպէս կարողութիւն եւ ունակութիւն պարզելի ու ներման, ինքնամերժման, եղբայրական օգնութեան: Այս սէրը, Աստծոյ սիրուց բխելով, Աւետարանի կորիզն է: Պարունակում է նաեւ չարիքի քարոզչութիւնը, որպէսզի այն մերժուի եւ մարդիկ միշտ աւելի գործնական կերպով լծուեն բարութեան փնտռուքին:

Բ) Քարոզչութեան անդադրում ջանքը:

Բոլոր քրիստոնեաները պէտք է գիտակցեն, թէ որքան կարեւոր է իրենց անձնական կեանքի վկայութիւնը: Վկայութիւն հաւատքով եւ խօսքով, այո՛, բայց նաեւ գործով ու

առաքինութեամբ: Եւ բոլոր քրիստոնեաներն են կանչուած սրան: Քրիստոնեայ հայրերն ու մայրերը՝ իրենց ընտանիքում եւ շրջապատում: Քրիստոնեայ այրերն ու կանայք՝ իրենց աշխատավայրում: Քրիստոնեայ տատիկներն ու պապիկները՝ իրենց թոռնիկների ու ընդհանրապէս ածող սերնդի նկատմամբ: Քրիստոնեայ երիտասարդները՝ իրենց ուսման ու աշխատանքի վայրում եւ ընկերական միջավայրում: Քրիստոնեայ ուսուցիչները՝ դպրոցներում եւ ուսումնական հաստատութիւններում: Քրիստոնեայ գրականագէտները՝ իրենց բանաստեղծութիւններում, վէպերում ու յօդուածներում: Քրիստոնեայ բժիշկները՝ հիւանդների ու տառապող անձանց կողքին: Քրիստոնեայ քաղաքագէտները՝ պետական հիմնարկներում եւ օրէնսդրական դաշտում: Բոլորս, բոլորդ, բոլորը

«Եթէ դուք վկայէք ինձ մարդկանց առաջ», ասում է Յիսուս, «ես էլ ձեզ կը վկայեմ Հօրս առաջ: Բայց եթէ դուք ամօթ համարէք ինձ մարդկանց առաջ, ես էլ ձեզ ամօթ կը համարեմ Հօրս առաջ, դատաստանի օրը»:

øðÆî àêª Ø°ð ÚàÚêÀ

Ð²Ø´²ðÒ²ô ö²èúø ²è Ð²Úð:

úðÐÛ°²È ¾ Ð²Ø´²ðÒ²àôØÛ øðÆî àêÆ

Ðà¶ÆÛ àô °Î°Ô°òÆÛ

êä²êàôØ °Û àô ²Ô°ðêàôØ©

§°Î« î °ð², ²ðÒÆð« î ¾ð ÚÆêàòê | £

